ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7—8, 1960 Общественные науки

Մ. Հ. Ադոնց

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Շահական Պարսկաստանի և սուլթանական Թուրքիայի բազմադարյան տիրապետությունը Հայաստանում նշանակալից չափով կասեցրել է երկրի տնտեսական և կուլտուրական զարդացումը։ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին 1828 թ. և 19-րդ դարի վերջերից նրա անցումը կապիտալիստական զարդացման ուղին, երկրի տնտեսական զարդացման մեջ որոշ աշխուժություն մտցրեց, սակայն ռուսական ցարիզմի դաղութային քաղաքականության հետևանքով Հայաստանի տնտեսական զարդացումը տեղի էր ունենում շատ դանդաղ։ Այս պատմական կոնկրետ պայմանները և մինչռևոլյուցիոն Հայաստանի կիսաֆեոդալական հարաբերությունների ուժեղ մնացորդները պայմանավորում էին երկրի տեխնիկա-տնտեսական հետամնացությունը։

Ռուսական ցարիզմի դաղութային քաղաքականությունը առանձնապես խիստ արդելակում էր արդյունաբերության զարդացմանը։ Որոշակի զարդացում էին ստանում արդյունահանող և վերամշակող արդյունաբերության այն ճյուղերը, որոնք ռուսական արդյունաբերությանը հումք էին մատակարարում և նրա հետ կոնկուրենցիայի մեջ մտնել չէին կարող։ 1913 թ. Հայաստանում ընդամենը կային ֆաբրիկա-գործարանային տիպի լոկ 5—6 ձեռնարկություն. ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը կազմում էր 50 միլ. ռուբլի, իսկ արդյունաբերական բանվորների քանակը չէր անցնում 5000-ից։

Նախառևոլյուցիոն Հայաստանում որոշակի զարդացման էին հասել պղնձի և դինու-կոնյակի արդյունաբերությունը, ընդ որում առաջինում տիրապետում էր ֆրանսիական կապիտալը, իսկ երկրորդում՝ ռուսական կապիտալը, ինչ վերաբերում է հայկական բուրժուազիային, ապա նա դերազանցապես գործում էր Հայաստանից դուրս, գլխավորապես Անդրկովկասի առևտրա-արդյունաբերական կենտրոններում՝ Բաքվում և Թբիլիսիում։

Առաջին իմպերիալիստական համաշխարհային պատերազմը և դաշնակների բուրժուա-նացիոնալիստական պարտիայի տիրապետությունը (1918—1920 թթ.) հայ ժողովրդին բերեցին նոր, չլսված թշվառություններ։ Դաշնակների տիրապետության տարիներին սովից և ազդամիջյան կռիվներից յուրաքանչյուր ամիս մեռնում էին տասնյակ հազարավոր մարդիկ։ Այդ տարիներին խիստ տուժում է գյուղատնտեսությունը, իսկ առանց այդ էլ թույլ արդյունաբերությունը հասնում է կատարյալ անկման։

Հայաստանում Սովետական իշխանության հաստատումը հայ ժողովրդին տրկեց ֆիզիկական կործանման սպառնալիքից և ստեղծեց նպաստավոր պայմաններ՝ երկրի ժողովրդական տնտեսության զարդացման, ազդային կուլտուրայի ծաղկման և բնակչության կենսամակարդակի բարելավման համար։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Ռևոլյուցիան, ուրիշ այլ նվաճումների հետ միասին՝ վերացրեց ազդային ճնշումը և մեր երկրի բոլոր ժողովուրդ-

ների համար ստեղծեց իրավահավասարություն: Սակայն չէր կարելի բավարարվել ազգերի միջև լոկ իրավական հավասարություն հաստատելով. դրա հետ միաժամանակ, ինչպես նշում էր Վ. Ի. Լենինը, պահանջվում էր ստեղծել ազգերի նաև փաստական հավասարություն:

Ազգությունների տնտեսական և կուլտուրական անհավասարության վերացումը, այսինքն նրանց փաստական անհավասարության վերացումը, ամենից առաջ պահանջում էր, որպեսզի արդյունաբերության բնագավառում հետամնաց ազգությունները հասնեին Ռուսաստանի այս առումով առաջ անցած շրջաններին:

Շնորհիվ Սովետական Միության կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ազգային իմաստուն քաղաքականության և ռուս մեծ ժողովրդի եղբայրական անշահախնդիր օգնության՝ մեր երկրի նախկին ազգային ծայրամասերի ժողովուրդները շատ կարճ ժամանակաշրջանում հսկայական հաջողություններ հասան արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության ու կուլտուրայի զարգացման գործում:

* *

Սովետական պետության տնտեսական ծրագիրը Հայաստանում, ինչպես և սովետական բոլոր ռեսպուբլիկաներում, իրագործվել սկսվեց Սովետական իշխանության առաջին իսկ օրերից: Սովետական իշխանության գոյության քառասունամյա շրջանում փլատակների ու մոխրի միջից վերածնվեց նոր Հայաստանը՝ որպես ՍՍՌՄ-ի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաներից մեկը: Սովետական իշխանության տարիներին հայկական ռեսպուբլիկան ծածկվել է էլեկտրակայաններով, արդյունաբերական ձեռնարկությունների խիտ ցանցով, ոռոգիչ ջրանցքներով. չտեսնված ծաղկման է հասել աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի՝ հայերի կուլտուրան:

Հայաստանում Սովետական իշխանության տարիներին ստեղծվել են արդյունաբերության բազմաքանակ նոր ճյուղեր, հագեցված նոր տեխնիկայով, կառուցվել են ավելի քան 500 արդյունաբերական խոշոր և միջին կարողության ձեռնարկություններ: Խոշոր ձեռնարկությունների մեջ կան այնպիսի գործարաններ և ֆաբրիկաներ, որոնցից յուրաքանչյուրը տալիս է ավելի շատ արտադրանք, քան տալիս էր մինչռևոլյուցիոն Հայաստանի ամբողջ արդյունաբերությունը:

Սովետական Հայաստանի արդյունաբերության գոյություն ունեցող ճյուղերի մեջ առավել գլխավորները հանդիսանում են. սննդի և թեթև արդյունաբերությունը, դունավոր մետալուրգիան, շինանյութերի արդյունաբերությունը, քիմիական արդյունաբերությունը, մեքենաշինությունը, տարբաշինությունը և էլեկտրաէներգետիկ արդյունաբերությունը:

Սննդի արդյունաբերությունը ավել է նախառևոլյուցիոն Հայաստանի արդյունաբերական արտադրանքի մոտավորապես կեսը: Չնայած այդպիսի բարձր տեսակարար կշռին, նախառևոլյուցիոն Հայաստանի սննդի արդյունաբերությունը հիմնականում մանր արհեստավորական բնույթի էր: Արդյունաբերության այդ բնագավառի միակ խոշոր ձեռնարկությունը Երևանի գինու-կոնյակի գործարանն էր, որը պատկանում էր ռուս կապիտալիստ Շուստովին:

Սովետական իշխանության տարիներին ստեղծվել են սննդի ժամանակակից արդյունաբերության բոլոր ճյուղերը։ Կառուցվել են գինու-կոնյակի տասնյակ նոր գործարաններ։ Հայկական կոնյակները և քաղցրահամ գինիները միջազգային կոնկուրսներում մեկ անգամ չէ, որ արժանացել են ոսկե մեդալի։ Ռեսպուբլիկայում գործում են պահածոների հինգ խոշոր գործարաններ՝ Երևանի, Հոկտեմբերյանի, Մեղրու, Այրումի և Վանաձորի, որոնք համարյա բացառապես բաց են թողնում մրգերի և բանջարեղենի պահածոներ։ Միութենական շուկայում բավականին մեծ է հայկական դեղձի և ծիրանի կոմպոտների պահանջը։ Մեծ զարգացման է հասել մսի և կաթի արդյունաբերությունը։ Երևան, Լենինական, Կիրովական և Վանաձոր քաղաքներում կառուցվել են մսի խոշոր կոմբինատներ։ Կաթնա-պանրամշակման գործարաններ կան ռեսպուբլիկայի համարյա բոլոր շրջաններում և քաղաքներում։ Լեռնային շրջանների պանրամշակման գործարանները պատրաստում են բարձրորակ շվեյցարական պանիր։ Ռեսպուբլիկայի սննդի արդյունաբերության մեջ նշանավոր են նաև շաքարի, հրուշակեղենի, մակարոնի և գարեջրի արդյունաբերությունը։ Հայաստանը նշանավոր է նաև իր «Ջերմուկ», «Արզնի», «Հանքավանա», «Սևան» և «Դիլիջան» բարձրորակ հանքային ջրերով, որոնք միաժամանակ արտահանվում են ռեսպուբլիկայի սահմաններից դուրս։ Սննդի արդյունաբերության արտադրանքը, ամբողջությամբ վերցրած, 1940—1959 թթ. ընթացքում ավելացել է 2,8 անգամ։

Թեթև արդյունաբերության ուղղությամբ ռեսպուբլիկայում ստեղծված են տեքստիլ, տրիկոտաժի, գուլպաների, կաթի, կաշվի, կոշիկի և մորթեղենի արդյունաբերական ճյուղեր։ Այս ուղղությամբ սովետական իշխանության տարիներին ռեսպուբլիկայում կառուցվել են մի քանի տասնյակ ֆաբրիկաներ ու գործարաններ, որոնց շարքում այնպիսի խոշոր ձեռնարկություններ, ինչպես Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատը, Լենինականի մանածագործական ֆաբրիկան, տրիկոտաժի և գուլպաների ֆաբրիկան, Կիրովականի տրիկոտաժի ֆաբրիկան, Երևանի Կամվոլնի կոմբինատը և մահուդի ֆաբրիկան, Լենինի անվան մետաքսագործական ֆաբրիկան Շահումյանի շրջանում, երեք խոշոր կարի ֆաբրիկաներ, ինչպես նաև կաշվի գործարանը և այլ ձեռնարկություններ։ Թեթև արդյունաբերության զարգացումը իր հերթին բերում է նրա բաց թողած արտադրանքի անընդհատ աճը։ Այսպես օրինակ, տեքստիլ արդյունաբերությունը բամբակյա գործվածքների արտադրանքը 1940 թ. 27 միլիոն մետրից, 1959 թ. հասցրել է 70 միլ. մետրի։ Հետպատերազմյան տարիներին ստեղծված բրդյա գործվածքների արդյունաբերությունը իր արտադրանքը 1950 թ. 0,5 միլիոն մետրից 1959 թ. հասցրել է 3,7 միլիոն մետրի, մետաքսյա գործվածքները 1950 թ. 1.5 միլիոն մետրից 1959 թ. հասել է 6,8 միլիոն մետրի, վերնազգեստային տրիկոտաժը 1940 թ. 276 հազար հատից 1959 թ. հասել է 1.6 միլիոն հատի, սպիտակեղենային տրիկոտաժը 2 միլիոն հատից հասել է 20 միլիոն հատի, իսկ կաշվե կոշիկները 933 հազար զույգից հասել է 5 միլիոն զույգի։ Թեթև արդյունաբերության արտադրանքը ամբողջությամբ առած, 1959 թ.՝ համեմատած 1940 թ. հետ, աճել է 5.8 անգամ։

Գունավոր մետալուրգիան մինչհեղափոխությունից Հայաստանում սահմանափակվում էր սև պղնձի բացթողմամբ։ Սովետական իշխանության տարիներին ստեղծվել են գունավոր մետալուրգիայի մի շարք նոր ճյուղեր։ Հայաստանի գունավոր մետալուրգիայի արդյունաբերությունը տալիս է մի շարք արտա-

գրանքներ, պղինձ, կալիումային, անոդային, մոլիբդենային, արճճա-ցինկային, ալյումինի և թանկարժեք մետաղների կոնցենտրատներ։ Գունավոր մետալուրգիայի բուռն զարգացման մասին են վկայում հետևյալ տվյալները. գունավոր մետալուրգիայի արտադրանքը 1959 թ., 1913 թ. համեմատությամբ, ավելացել է զգալի չափով. մոլիբդենային կոնցենտրատը 1959 թ., համեմատած 1955 թ. հետ, աճել է 2,6 անգամ, իսկ ռաֆինացված պղնձի ձուլումը՝ 21 տոկոսով։

Շինանյութերի արդյունաբերությունը Հայաստանում ծագել ու զարգացել է Սովետական իշխանության տարիներին։ Հայաստանն ունի շինարարական քարի, կրաքարի և շինանյութերի արտադրության համար այլ բազմատեսակ նյութերի անսպառ պաշարներ։ Ռեսպուբլիկայում կազմակերպված է տարբեր տեսակի տուֆի, բազալտի, գրանիտի, մարմարի, պեմզայի հանույթը։ Այդ ամենը օգտագործվում է որպես նյութ՝ շենքերի պատերի կառուցման համար։ Հայկական վարդագույն տուֆից կառուցված շինությունները զարդարում են միության շատ քաղաքներ։ 1943 թ. Վեդու շրջանում ավարտվեց ցեմենտի խոշոր գործարանի կառուցումը, որտեղ ցեմենտից բացի արտադրվում է նաև թերթաքար։ Շինանյութերի արդյունաբերության ձեռնարկություններից են նաև Թումանյանի հրակայուն նյութերի գործարանը, երկաթ-բետոնային կառուցվածքների գործարանը, ապակետարայի, հախճապակու գործարանները, կրի, կղմինդրի-աղյուսի և այլ բազմաթիվ գործարաններ։ Շինանյութերի արդյունաբերության զարգացման տեմպերի մասին կարելի է գաղափար կազմել թեկուզ և հենց նրանով, որ 1940—1959 թթ. ընկած շրջանում արդյունաբերության այդ ճյուղի համախառն արտադրանքը աճել է 17 անգամ։

Քիմիական արդյունաբերության առաջին ձեռնարկությունը Հայաստանում կառուցվել է մինչպատերազմյան հնգամյակների տարիներին։ 1934 թ. Կիրովականում շարք մտավ ռեսպուբլիկայի քիմիական արդյունաբերության խոշոր ձեռնարկությունը՝ Մյասնիկյանի անվան կոմբինատը։ 1939 թ. Երևանում շահագործման հանձնվեց սինթետիկ կաուչուկի խոշոր գործարանը։ Հետպատերազմյան տարիներին կառուցվեցին քիմիական արդյունաբերության շատ նոր գործարաններ։ Հայաստանի քիմիական արդյունաբերությունը թողարկում է բազմատեսակ արտադրանք՝ կաուչուկ, կաուստիկ սոդա, քլորբենզոլ, աղաթթու, սուպերֆոսֆատ, ամյակի բորակ, ցիանպլավ, կալցիումի ցիանամիդ, պղնձարջասպ, տարբեր ներկեր և լաքեր, պոլիվինիլացետատի 12 խումբ անուններ արտադրանք և այլն։ 1943 թվականից ռեսպուբլիկայում ստեղծված է ավտոդողերի և ավտոկամերաների արտադրությունը, կազմակերպված է նաև ռետինե-տեխնիկական և պլաստմասսայի ապրանքների արտադրությունը։

Հայաստանի արդյունաբերության ճյուղային կառուցվածքի մեջ քիմիական արդյունաբերությունը իր համախառն արտադրանքի տեսակարար կշռով բռնում է առաջնակարգ տեղերից մեկը։ Քիմիական արդյունաբերության կառուցվածքը այսպիսին է. հիմնական քիմիան 12,5%, սինթետիկ կաուչուկի արտադրությունը՝ 24,7%, օրգանական սինթետիկ նյութերի արտադրությունը՝ 10,3%, ավտոդողերի արտադրությունը՝ 42% և քիմիական այլ արտադրությունը 10,5%

Քիմիական արտադրության համախառն արտադրանքը 1959 թ., համեմատած 1940 թ. հետ, աճել է զգալի չափով։

Մեքենաշինությունը հանդիսանում է Հայաստանի արդյունաբերության ամենաերիտասարդ ճյուղը։ Արդյունաբերության այդ ճյուղն իրականում ստեղծվել է հետպատերազմյան տարիներին և արագ զարգացման շնորհիվ այն ռեսպուբլիկայի արդյունաբերության մեջ արդեն գրավում է առաջատար տեղերից մեկը։

Հայաստանի մեքենաշինությունը հիմնականում ստացել է ոչ մետաղատար, բայց աշխատատար և թանկարժեք բարդ մեքենաների ու մեխանիզմների արտադրության ուղղությունը։ Ռեսպուբլիկայի մեքենաշինության գլխավոր ճյուղերն են՝ էլեկտրամեքենաշինությունը, էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը, դազգահաշինությունը, սարքաշինությունը, կոմպրեսորների, նասոսների արտադրությունը և այլն։

1959 թ. ՍՍՌՄ-ի էլեկտրատեխնիկական արդյունաբերության և էլեկտրամեքենաշինության մեջ Սովետական Հայաստանի տեսակարար կշիռը կազմել է 4,8%։ Մեքենաների մի քանի տեսակի գծով Հայաստանի տեսակարար կշիռը բավականին բարձր է։ Այսպես օրինակ, 1959 թ. մինչև 100 կվտ. սինխրոնային գեներատորների թողարկմամբ Հայաստանի տեսակարար կշիռը ՍՍՌՄ-ի արտադրության մեջ կազմել է 53,1%, շարժական էլեկտրականների գծով 46,9%, ուժային տրանսֆորմատորների գծով՝ 7%։

Հայկական ՍՍՌ-ն ոչ փոքր տեղ է գրավում էլեկտրա-տեխնիկական արդյունաբերության այնպիսի արտադրանքների գծով, ինչպես կաբելային արտադրանքի բարձրավոլտ և ցածրավոլտ սարքավորումների, էլեկտրասարքավորման, էլեկտրալամպերի, էլեկտրատեղադրման նյութերի և այլնի։

Մեքենաշինության և էլեկտրատեխնիկական արդյունաբերության հետ միասին մեծ նշանակություն են ստանում նաև մետաղահատ դազգահների, մամլակային սարքավորումների արտադրությունը և սարքաշինությունը։ Բավական է ասել, որ 1960 թ. 1958 թ. դիմաց, մետաղահատ դազգահների թողարկումը կավելանա 2 անգամ, իսկ մամլակային կահավորմանը՝ 3 անգամ։

Հայաստանի դազգահաշինությունը հիմնականում ընթանում է հատուկ մասնագիտացված դազգահների, ավտոմատների, կիսաավտոմատների և ագրեգատային դազգահների արտադրության ուղղությամբ։

Հայկական ՍՍՌ-ում զարգանում են մեքենաշինության նաև այլ տեսակներ, ինչպես կոմպրեսորների, հիդրոնասոսների, սենդի արդյունաբերության, սարքաշինության արտադրությունը, ավտոմեքենաների և տրակտորների մասերի արտադրությունը և այլն։

Հայաստանի մեքենաշինական և մետաղամշակման արդյունաբերության համախառն արտադրանքը 1959 թվականին, համեմատած 1940 թ. հետ, ավելացել է 38 անգամ, իսկ մեքենաշինության արտադրանքը այդ նույն ժամանակամիջոցում ավելացել է 100 անգամ։

Առավել արագ տեմպերով է զարգացել Սովետական Հայաստանի էլեկտրաէներգետիկ արդյունաբերությունը։ Սովետական իշխանության տարիներին կառուցվել և շահագործման են հանձնվել տասնյակ նոր հիդրոէլեկտրակայաններ։ Միայն Սևան-Զանգու կասկադի վրա շահագործման են հանձնվել 7 խոշոր հիդրոէլեկտրակայաններ։ 1959 թվականին համեմատած 1947 թ. հետ, էլեկտրաէներգիայի արտադրությունը ավելացել է 7 անգամ, իսկ 1913 թ. համեմատությամբ՝ 515 անգամ։ Մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի արտադրությամբ Սովետական Հայաստանը առաջ է անցել այնպիսի զարգացած

կապիտալիստական երկրներից, ինչպիսիք են Ֆրանսիան, Ճապոնիան, Բելգիան, Իտալիան, Հոլանդիան։ Հայաստանում մեկ շնչին 20 անգամ ավելի էլեկտրաէներգիա է արտադրվում, քան Թուրքիայում և Իրանում։

Հայաստանի էլեկտրաէներգետիկ տնտեսության համար բնութագրականն այն է, որ համարյա ողջ էլեկտրաէներգիան արտադրվում է հիդրոէլեկտրակայանների միջոցով, և դրա համար էլ էլեկտրաէներգիայի ինքնարժեքը շատ ցածր է։ Սովետական Հայաստանում էլեկտրաէներգիան օգտագործվում է ոչ միայն արդյունաբերության մեջ և տրանսպորտում, այլև համարյա բոլոր սովխոզներում և կոլխոզներում։

Բոլոր գյուղական բնակավայրերի 98%-ը էլեկտրաֆիկացված է, իսկ 1960 թ. կավարտվի ռեսպուբլիկայի գյուղատնտեսության համատարած էլեկտրիֆիկացումը։

Արագ տեմպերով են զարգացել արդյունաբերության նաև մնացած ճյուղերը։

Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքը 1959 թ., ամբողջությամբ վերցրած, համեմատած 1913 թ. հետ, ավելացել է 61 անգամ, իսկ մեքենաշինական և մետաղամշակման արդյունաբերության արտադրանքը այդ նույն ժամանակաշրջանում ավելացել է 589 անգամ։

Այսպիսիք են տակավին այն ոչ լրիվ տվյալները, որոնք բնութագրում են Սովետական Հայաստանի ինդուստրիալ զարգացման բարձր մակարդակը։

Հայաստանի հզոր ինդուստրիալ զարգացման հետ միաժամանակ ընդլայնվում են նրա տնտեսական կապերը ՍՍՌՄ-ի այլ տնտեսական շրջանների հետ, միաժամանակ աճում է նրա բաժինը Սովետական երկրի արտաքին առևտրի ընդհանուր բալանսում։

Ընդհանուր պլանի համաձայն, Հայկական տնտեսական շրջանը ՍՍՌՄ-ի այլ տնտեսական շրջաններն է ուղարկում արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի տարբեր առարկաներ և ստանում է իրեն անհրաժեշտ նոր ապրանքներ ու նյութեր։ Երկրի տնտեսական այլ շրջաններից Հայաստան եկող ապրանքների մեջ գլխավոր տեղն են բռնում սև մետաղները, անտառանյութը, ածուխը, նավթամթերքները, մեքենաները և սարքավորումները, մեքենաների կոմպլեկտացիայի առարկաներ և արդյունաբերական արտադրանքի շատ այլ տեսակներ։ Ընդսմին պետք է նկատել, որ գնալով աճում է Անդրկովկասի միութենական ռեսպուբլիկաների նշանակությունը Հայկական ՍՍՌ-ին մետաղալոմների, նավթամթերքների, ածխի և այլնի մատակարարման տեսակետից։

Տնտեսական լայն կապերը նպաստում են փոխադարձ օգնությանը և մեր երկրի բոլոր տնտեսական շրջանների տնտեսության արագ զարգացմանը։

Հայկական ՍՍՌ-ն ակտիվ մասնակցություն է ունենում ՍՍՌՄ-ի արտաքին տնտեսական կապերին, ընդորում նա մատակարարում է ոչ միայն կենսամթերքներ, այլ գնալով ավելի շատ արտադրամիջոցներ։ Բավական է նշել, որ միայն վերջին երկու տարում՝ 1957—1959 թթ. արտահանության ծավալը աճել է 4,4 անգամ։ Հայկական ռեսպուբլիկան արտահանում է 64 անուն ապրանքներ։ 2 տարվա ընթացքում ավելի քան կրկնապատկվել է այն ձեռնարկությունների թիվը, որոնց արտադրանքն արտահանվում է։ Հայաստանն այժմ ապրանքներ է արտահանում արտասահմանյան 32 երկրներ, այդ թվում 20 կապիտալիստական երկրներ, ինչպես Բիրմա, Ինդոնեզիա,

Ցեյլոն, Ուրուգվայ, Չիլի, Արգենտինա, ինչպես և Արաբական արևելքի երկրները։

Հայաստանի մատակարարումների հիմնական մասը ուղարկվում է Չինական ժողովրդական Հանրապետություն, Ալբանիա, Բուլգարիա և Մոնղոլիա։

Հարավ-արևելյան Ասիայի երկրները՝ Հնդկաստան, Բիրմա, Կամբոջա, Ցեյլոն, Ինդոնեզիա, մատակարարվում են մեքենաներ և սարքավորումներ՝ էլեկտրամոտորներ, շարժական էլեկտրակայաններ, տրանսֆորմատորներ, էլեկտրակարելի իրեր, ֆոտոապարատներ, արթնացուցիչ ժամացույցներ և արդյունաբերական այլ ապրանքներ։ Մեր հանրապետության կողմից համանման ապրանքներ ուղարկվում են նաև Մերձավոր և Միջին արևելքի երկրներ, առանձնապես Աֆղանիստան և Միացյալ Արաբական Հանրապետություն, Լատինական Ամերիկայի երկրները՝ Արգենտինա, Չիլի։ Հայաստանի արդյունաբերության արտադրանքը ուղարկվում է նաև Հունաստան և Իսլանդիա։

Պետք է նկատել, որ Հայաստանը, որը ոչ հեռավոր անցյալում կարիք էր զգում ամեն տեսակի տնտեսական և տեխնիկական օգնության, այսօր ինքն է օգնում հետամնաց և թույլ զարգացած երկրներին և այն էլ մեքենաշինության արտադրանքով։

Հանրապետության արտահանության կառուցվածքում 25,6% կազմում է գունավոր մետալուրգիայի արտադրանքը, 18,6%՝ մեքենաշինության արտադրանքը. 13,3%՝ քիմիական արդյունաբերության արտադրանքը, իսկ մնացած 42,5% կազմում է թելթել և սննդի արդյունաբերության արտադրանքը, որում նշանակալից տեղ է գրավում գինու-կոնյակի արտադրությունը։

Այսպես է ներկայանում Հայաստանը իր արտաքին տնտեսական հարաբերություններում։

Հայաստանի արդյունաբերության բուռն աճի հետ միասին աճել են նաև նրա կադրերը։ Բավական է ասել, որ 1959 թվականին, համեմատած 1913 թ. հետ, արդյունաբերության և շինարարության մեջ զբաղված բանվորների և ծառայողների թիվը ավելացել է 30 անգամ։ Սակայն քանակական այդ աճը չի տալիս այն արմատական փոփոխությունների լրիվ բնութագիրը, որոնք տեղի են ունեցել հանրապետության արդյունաբերության կադրերի բնագավառում։ Քանակական աճի հետ միասին անշեղորեն բարձրացել է կադրերի կուլտուրական և պրոֆեսիոնալ-տեխնիկական մակարդակը։ Արդյունաբերական բանվորների ճնշող մեծամասնությունը ունի յոթնամյա և միջնակարգ կրթություն։ Նրանք տիրապետել են արտադրական բարդ մասնագիտությունների և հմտորեն օգտագործում են ժամանակակից տեխնիկան և տեխնոլոգիան։

Սովետական իշխանության տարիներին ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի համար ստեղծվել է ինժեներա-տեխնիկական աշխատողների բազմաքանակ մի բանակ։ Հայաստանում գործող 11 բարձրագույն ուսումնական հաստատությունները և 33 տեխնիկումները ամեն տարի բաց են թողնում մի քանի հազար բարձրորակ մասնագետներ, որոնք աշխատում են ժողովրդական տնտեսության, լուսավորության, առողջապահության բնագավառներում և գիտահետազոտական հիմնարկներում։

Ինչպես միութենական մյուս հանրապետությունների, այնպես էլ Սովետական Հայաստանի էկոնոմիկայի ու կուլտուրայի հետագա զարգացման համար փայլուն հեռանկարներ է բացում յոթնամյա պլանը։ Բավական է ասել, որ այդ պլանի համաձայն 1965 թվականին, համեմատած 1958 թ. հետ, Հայկական

ՍՍՌ-ի արդյունաբերական արտադրանքի ծավալը կաճի 2,3 անգամ։ Յոթնամյակի ընթացքում ռեսպուբլիկայում կկառուցվեն արդյունաբերական ավելի քան 100 խոշոր ձեռնարկություններ։ Ռեսպուբլիկայի կապիտալ ներդրումների ծավալը յոթնամյակի ընթացքում հավասար կլինի այն գումարին, որը ներդրվել է Սովետական իշխանության բոլոր նախորդ տարիներին։

Յոթնամյակի ընթացքում խոշոր առաջխաղացում տեղի կունենա մեքենաշինական արդյունաբերության մեջ։ Յոթնամյակի վերջում արտադրանքի ծավալի տեսակետից մեքենաշինությունը Հայաստանի արդյունաբերության մեջ կդրավի առաջնակարգ տեղերից մեկը։ Նախատեսվում է ստեղծել մեքենաշինության և սարքաշինության մի շարք նոր ճյուղեր, որոնց մեջ աչքի ընկնող տեղ կդրավի ռադիոտեխնիկական արդյունաբերությունը և ավտոմատիկայի միջոցների արտադրությունը։ Հայաստանը դառնում է գիտատեխնիկական մտքի խոշոր կենտրոններից մեկը նախագծումների ուղղությամբ, ինչպես և հաշվիչ էլեկտրամեքենաների ստեղծման գծով։ Այդ մեքենաների առաջին փորձնական օրինակները ցույց են տալիս մեր դիտնականների, կոնստրուկտորների, մեքենաշինարար բանվորների հասունությունը տեխնիկական բարդ պրոբլեմների լուծման բնագավառում։

Մեքենաշինությունից հետո, աճի տեմպերի տեսակետից, երկրորդ տեղը դրավում է քիմիական արդյունաբերությունը։ Պլանով նախատեսվում է լայն մասշտաբներով կազմակերպել պլաստմասսաների, արհեստական և սինթետիկ մանրաթելի, մետաքսի, արհեստական կաշվի և այլ նյութերի արտադրությունը։

Գունավոր մետալուրգիայի բնագավառում արդյունաբերության գոյություն ունեցող ճյուղերի ընդլայնման հետ միասին, նախատեսվում է հեռացնել հազվագյուտ ցրված մետաղները՝ ինդիում, տելուր և այլն։

Նշանակալից չափով կզարգանան նաև թեթև և սննդի արդյունաբերությունը, շինանյութերի արտադրությունը և արդյունաբերության այլ ճյուղեր։

Յոթնամյակի ընթացքում նշանակալից չափով կընդլայնվի ռեսպուբլիկայի էներգետիկ բազան։ Նախատեսվում է Ադրբեջանական ՍՍՌ-ից ստացվող բնական գազի հիմքի վրա կառուցել մի շարք ջերմաէլեկտրակայաններ, դրանից բացի կառուցվելու են երեք խոշոր հիդրոէլեկտրակայաններ և բարձրավոլտ էլեկտրահաղորդման գիծ, որով էլեկտրաէներգիա կստացվի Սովետական Ադրբեջանից։ Այդ ամենը հնարավորություն կտան ավելի ռացիոնալ օգտագործելու Սևանա լճի ջուրը և նրա մակարդակը պահել ավելի բարձր կետի վրա։

Արդյունաբերության քանակական աճը և ընդլայնումը ուղեկցվելու է տեխնիկայի անընդհատ զարգացմամբ, արտադրության ավտոմատացմամբ՝ նոր պրոգրեսիվ տեխնոլոգիայի ներդրմամբ արդյունաբերության բոլոր ճյուղերում։

Տեխնիկայի զարգացման, արդյունաբերության աշխատողների կուլտուրայի և տեխնիկական մակարդակի բարձրացման և աշխատանքի կազմակերպման բարելավման հետևանքով նշանակալից չափով կբարձրանա աշխատանքի արտադրողականությունը։

Յոթնամյակի ընթացքում տեղի կունենա բանվորների, ծառայողների և ռեսպուբլիկայի ողջ բնակչության կենսամակարդակի հետագա բարձրացում։

ՍՍՌՄ Գերագույն Սովետի 4-րդ սեսիայի որոշումը՝ հարկերի վերացման, աշխատանքային օրվա տևողության կրճատման մասին, հանդիսանում է աշխատավոր մարդկության նկատմամբ Կոմունիստական պարտիայի և սովետական պետության անդուլ հոգատարության նոր վառ օրինակը։

Բերված բոլոր տվյալները ցույց են տալիս, որ ժողովրդական տնտեսության սոցիալիստական սիստեմի և սովետական քաղաքական կարգերի առավելությունների շնորհիվ, ընդամենը քառասուն տարվա ընթացքում, անճանաչելիորեն վերափոխվել է Հայաստանի տնտեսական դեմքը։ Տնտեսական և կուլտուրական տեսակետից ցարական իմպերիայի նախկինում հետամնաց ազգային ծայրամասը վերածվել է Սովետական Սոցիալիստական առաջավոր Ռեսպուբլիկայի՝ ժամանակակից բարձր զարգացման հասած ինդուստրիայով, բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների բազմաքանակ որակյալ կադրերով և ազգային ծաղկող կուլտուրայով։ Հայ ժողովուրդը, ինչպես և Սովետական Միության մյուս ժողովուրդները, հպարտանում է իր հոյակապ հաջողություններով և, ձեռքերը չծալելով, մեծ ոգևորությամբ աշխատում է իր Հայրենիքի հետագա ծաղկման համար՝ հանուն մարդկության նվիրական նպատակի՝ կոմունիզմի հաղթանակի։

М. А. Адонц

Индустриальное развитие Советской Армении

Резюме

В статье рассматривается развитие промышленности Армении за 40 лет Советской власти. Некогда отсталая окраина царской России—Армения—превратилась в промышленно развитую республику. Ныне в Советской Армении имеются почти все отрасли современной промышленности. Валовая продукция промышленности Армении в 1959 г. увеличилась против 1913 г. в 61 раз, а продукция машиностроительной и металлообрабатывающей промышленности за этот же период возросла в 589 раз. Характерно, что Армения, нуждавшаяся в недалеком прошлом во всякого рода экономической и технической помощи, сегодня сама оказывает помощь экономически отсталым и слаборазвитым странам. Советская Армения экспортирует товары в 32 зарубежные страны.

Новые блестящие перспективы развития экономики республики открыл семилетний план развития народного хозяйства СССР. Согласно семилетнему плану, объем промышленной продукции Армянской ССР восрастет в 1965 г. по сравнению с 1958 г. в 2,3 раза. Объем капитальных вложений в народное хозяйство республики за семилетие будет равен сумме капиталовлажений, произведенных за все предыдущие годы Советской власти.

M. A. Adontz

Industrial development of Soviet Armenia

Summary

The growth of industry of Armenia for the forty years of Soviet power is under review in the article. Armenia the once backward outlying district of tsarist Russia has been converted into an industrially developed republic. Now the Soviet Armenia has almost all branches of modern industry. The gross output of Armenia's industry in 1959 has been extended as against 1913 61 times as much, as to the output of machine-building and metal-working industry within the same period of time has increased 589 times as much. It is characterictic that Armenia, that had been in need of all sorts of economic and technical aid not long ago now a days Armenia itself gives help to the economically retarded and under-developed countries. The Soviet Armenia exports articles to 32 foreign countries. Seven-year Plan for development of national economy of USSR has opened new splendid perspective for development of the rebublic's economy. In 1965 the volume of industrial output of the Armenian SSR increases 2,3 times in comparison with 1958. The volume of capital investment into national economy of the republic within seven years will be equal to the sum invested during all the previous years of the Soviet power.